ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2024թ. № 224

ԳՈՀԱՐ ՊԱԼՈՅԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 20-ի թիվ 18-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի օգոստոսի 20-ի թիվ 106 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 54 օրդերը և Գոհար Պալոյի Ստեփանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19022024-06-0064 վկայական՝ տրված 19.02.2024 թվականին) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շ. Թորոսյան փողոց 1/1 շենք, 9 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Գոհար Պալոյի Ստեփանյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Ստեփանյան Գոհար Պալոյի - ինքը՝ ծնված 22.12.1951 թվականին,

2) Դարչինյան Ալինա Աղաբեկի - աղջիկը՝ ծնված 17.01.1991 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ.փետրվարի 27
ք.Սպիտակ